«ՍԵՎԱՆԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ»

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդներ

Ղեկավար՝ Արմենուհի Մելքոնյան

Դասվար՝ Աստղիկ Հարությունյան

Ուսումնական հաստատություն <<ՀՀ Վահան գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Սևան 2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

Թեմայի արդիականությունը----------4

Թեմայի նպատակը----------4

Հետազոտության խնդիրները----------5

Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները----------6

Եզրակացություն----------18

Առաջարկություն----------20

Գրականություն ցանկ----------21

Ներածություն

Կրտսեր դպրոցում կարևոր ցուցանիշ է սովորողների ընթերցանության հմտության զարգացումը:

Ընթերցանությունը մտքի համար նույնն է, ինչ ֆիզիկական վարժությունը՝ մարմնի: <<Կարդալ սովորում են կարդալով, գրել՝ գրելով>>, - աղայանական այս ձևակերպումը լավ ուղեցույց է կրտսեր տարիքում:

Գիրն ու **ընթերցանությունը խոսքային գործունեության** ձևավորման բարդ ու բազմամակարդակ պրոցեսներ են, որի իրականացմանը մասնակցում են մի շարք վերլուծիչներ՝ խոսքալսողական, խոսքաշարժողական, տեսողական, տեսողատարածական, ընդհանուր շարժողական: Նրանց միջև գրի ու ընթերցանության պրոցեսում ձևավորում է սերտ կապ ու փոխկապվածություն:

Գիրն ու ընթերցանությունը համակարգային ֆունկցիաներ են, ուստի այդ համակարգի որևե օղակի կամ օղակների ոչ լիարժեք աշխատանքը բերում է ամբողջ համակարգի ոչ լիարժեք աշխատանքին:

Ինքնուրույն ընթերցանության դասերի կազմակերպման յուրահատկությունն այն է, որ ուսուցիչն ինքը պետք է պլանավորի ու կառուցի դասաժամ: Ինքնուրույն ընթերցանությունը պետք է կազմակերպվի այնպես, որ լինի հետաքրքիր, ուսուցանող և սպասված աշակերտների կողմից:

Վարժ կարդալ դեռ չի նշանակում կարդացածը հասկանալ: Կարևոր է, որ երեխան կարդացածը հասկանա, կարդացած տեքստը դիմացինին հասկանալի ներկայացնի: Ընթերցանության նյութերն էլ ինքնանպատակ չեն. չէ որ այս տարիքում երեխայի լեզուն , խոսքը շատ զգայուն են: Հայ մանկագիրների ստեղծագործությունների ընթերցման ու բերանացի անելը նպաստում են լեզվամտածողության զարգացմանը, իսկ համաշխարհային մանկական գրականությունը խթանում է սովորողների երևակայություն զարգացմանը:

Դասարանական ընթերցանությունը մայրենի լեզվի տարրական դասնթացի հիմնական բաժիններից մեկն է: Նրանում են ամփոփվում ու նրա միջոցով են իրականացվում երեխաների միջ կարդալու տեխնիկայի զարգացումն, գործնական ճանապարհով մայրենի լեզվի ուսուցման, աշխարհաճանաչողական տարրական

գիտելիքների հաղորդման ծրագրային պահանջները։ Հենց այդ նկատառումներով էլ դասարանական ընթերցանությունը տարրական դասարաններում աշակերտների մտավոր զարգացման ու բարոյական դաստիրակության ամենակարևոր և անփոխարինելի միջոցներից մեկն է։

Մանկավարժական երկարամյա գործունեության տարիներին ջանացել են դաստիարակել գրին ու գրականությանը նվիրված, **ընթերցասեր երեխաներ**։ Այս առումով կարևոր դերակատարում ունեն հատկապես ընթերցանությունը։ Աշխատում են դրանք կազմակերպել այնպես, որ երեխաները վարժ կարդալ սովորեն, ընթերցանությունը հաճույք պատճառի նրանց, և միաժամանակ փոխանցվի արժեքավոր տեղեկատվություն։ Կարդալ և գրել սովորելով՝ երեխաները մուտք են գործում մեծահասակների աշխարհ, ձեռք են բերում գրելու և կարդալու հմտություններ, դառնում ավելի ինքնուրույն և անկախ։ Անցնելով դասարանից դասարան՝ փոխվում են երեխաների կարդալու դրդապատճառները։

Թեմայի արդիականությունը

Այսօր արդեն դասագիրքը չի կարող միակ ընթերցանության նյութը լինել, տեղեկատվության միակ աղբյուրը լինել։ Ընթերցարանների գոյությունը սովորողին մտերմացնում է գրքին, ընթերցանությանը։ Դեռ նոր ընթերցողի համար հեշտ է սկսել փոքր տեքստերից, որոնք ընթերցարանում շատ են։ Պատմություններ, որոնք արդեն լսել է մեծահասակներից, և հիմա ինքը կարող է ընթերցել ու զգալ դրա հաճույքը։ Մուլտֆիլմեր, ֆիլմեր, որոնք դիտել է հիմա կարող է կարդալ, և ինքը դառնալ ֆիլմի սցենարիստը։

Թեմայի նպատակը

Յուրաքանչյուրի սրբազան պարտքն է պահել-պահպանել Իր մայրենի լեզուն, որպեսզի այն ավելի գեղեցկանա, հարստանա, ավելի ճշտորեն արտահայտվի մտածածն ու զգացածը, դառնա ավելի պատկերավոր։ Հայտնի է, որ սիրելու և գնահատելու համար ամենից առաջ պետք է լավ ճանաչել, լավ իմանալ լեզուն, թափանցել նրա գաղտնիքների մեջ։

Հետազոտության խնդիրներները

Մայրենի լեզվի տարրական դասընթացի նպատակն է երեխաների ուսումնասիրության այս առաջին օղակում իրականացնել հետևյալ խնդիրներն ու պահանջները, որոնք հիմնականում կապվում են դասարանական ընթերցանության հետ.

1. երեխաների մեջ մշակել ու զարգացնել կարդալու տեխնիկան՝ իր որակական բոլոր հիմնական հատկանիշներով;

2. գործնական կերպով սովորեցնել մայրենի լեզուն՝ հարստացնել երեխաների բառապաշարը, մշակել և զարգացնել երեխաների լեզվական կարողությունները;

3. աշխարհաճանաչողական տարրական տեղեկություններ տալ շրջապատի բնական և հասարակական երևույթների, մարդկանց և նրանց աշխատանքային գործունեության մասին;

4. իրականացնել երեխաների բարոյական, գեղագիտական ու գաղափարական դաստիրարակության ուղղությամբ դպրոցի առջև դրված կարևոր խնդիրները:

Միշտ էլ **դպրոցի** հիմնական **խնդիրներից** մեկը եղել և մնում է իր սաներին սովորեցնել **սիրել գիրքը**, օգտվել նրանից, անընդհատ նոր գիտելիքներ ստանալ այնտեղից: Իսկ դրան կարելի է հասնել աշակերտների մեջ լայն կարդալու կարողությունը մշակելով, որովհետև այն **մարդու մտավոր զարգացման** ու **առաջընթացի** հիմնական նախապայմանն է: Որքան երեխաների մեջ ամուր և հաստատուն դրվեն լավ կարդալու կարողության մշակման հիմքերը, այնքան կարդալը երեխայի համար ավելի շուտ կդառնա գիտելիքների ձեռքբերման կարևոր ու անփոխարինելի միջոց: Հետևաբար, գրաճանաչության ուսուցման ժամանակ յորաքանչյուր նոր տառի ուսուցումը, իսկ հետագայում յորաքանչյուր նոր բնագրի մշակումը պետք է **երեխաների մեջ կարդալու կարողության** մշակման ու զարգացման միջոց դառնա, որպեսզի տարրական դասընթացի վերջում վերածվի որոշակի **հմտություն**: Լավ կարդալ ասելով պետք է հասկանալ ճիշտ, հասկանալով, սահուն ու արտահայտիչ ընթերցումը, այսինքն՝ երբ առկա են կարդալու որակական բոլոր հատկանիշները:

Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները

Արտահայտիչ ընթերցանությունն արվեստ է, և եթե այն չի դիտվում որպես այդպիսին, ապա տեսական բացատրություններն ու կանոնները չեն ծառայում նպատակին, արդյունքում գրական երկը կորցնում է հետաքրքրությունը և այդ գործընթացը սովորողների համար ձանձրալի է դառնում: Արտահայտիչ ընթերցանությունը գրական-գեղարվեստական ստեղծագործության մարմնավորումն է հնչող խոսքի մեջ: Արտահայտիչ կարդալ ստեղծագործությունը նշանակում է ճշմարտանման, գրողի մտահղացմանը համապատասխան ունկնդրին հաղորդել այն զգացումներն ու հոգեվիճակը, որոնք դրված են ստեղծագործության մեջ:

Արտահայտիչ ընթերցանությունը առարկայի դասավանդման ընթացքում անընդհատ մատնվելով բառերի արտասանության, հնչողության արվեստին՝ ներկայացնում ենք թե ինչ ընդհանրություններ ու տարբերություններ կան թատերական արվեստի, գեղարվեստական ընթերցանության և արտահայտիչ ընթերցանության մեթոդիկայի դասավանդման միջև: Պարզվում է՝ աղերսներ կան և այն էլ շատ սերտ: Գեղարվեստական ընթերցանության երկու ուղղություններն էլ երկխոսություն և պատմողական ոճ, հավասարապես կիրառելի են արտահայտիչ ընթերցանության մեջ: Սակայն սրանք դեռ բավարար չեն առօրյա կյանքի բազմատարր իրավիճակները ներկայացնելու համար: Հնարավոր չէ նույն ոճով արտահայտել՝ ո՛չ տխրությունը և ոչ էլ հուզմունքն ու բարկությունը: Նույն կերպ և ընթերցելիս անհրաժեշտ է, որ ձայնային ելևէջները, արտահայտչականությունը համապատասխանեն ընթերցվող նյութի բովանդակությանն ու տրամադրությանը, որպեսզի այն հասկանալի և հետաքրքիր լինի: Պետք է անպայման հաշվի առնել նաև ունկնդիրների կարգավիճակը, մտավոր մակարդակն ու տարիքը, քանի որ նույն պատմվածքը կամ հեքիաթը տարբեր կերպ և տարբեր ազդեցություն կարող է գործել ինչպես մանուկի, դեռահասի և մեծահասակի, այնպես էլ աշակերտի, ուսուցչի, ծնողի և գիտնականի վրա:

Կարդալ՝ նշանակում է **հասկանալ** և **ըմբռնել** ստեղծագործության **իմաստը**: **Հասկանալով կարդալը** կրտսեր դպրոցի մայրենիի ուսուցման հիմնական նպատակներից մեկն է:

Խոսքի հուզականությունը և զգացմունքայնությունը ևս շատ կարևոր հանգամանք է գեղարվեստական ընթերցանության ժամանակ: Ընթերցանության գործընթացում սովորողների հուզականության բարձրացմանը ստեղծագործության մեջ արտահայտված զգացմունքների ընբռնմանը մեծապես նպաստում է մինչև նյութի ընթերցումը կազմակերպված նախապատրաստական զրույցը:

Ուրեմն՝ արտահայտիչ, գեղարվեստորեն ընթերցանությունը, խոսքը ոչ միայն հարստացնում են սովորողների խոսքային կարողությունները, սովորեցնում են հասկանալ և արժևորել հնչվող բառի իմաստը, դաստիարակում են ճաշակ գնահատելու հղկված, մշակված խոսքը, այլև զարգացնում են նրանց մտածողությունը, բազմաշերտ դարձնում սովորողների զգացմունքներն ու ողջ արժեհամակարգը:

Արտահայտիչ ընթերցանությունը խոսքային գործունեություն է, բանավոր խոսքի արվեստ, որը մեծ առավելություններ ունի գրավորի համեմատությամբ: Գրավոր խոսքին շունչ ու ոգի տվող սահմանափակ թվով կետադրական նշանների միջոցով կարող ենք որոշ զգացմունքներ արտահայտել, վերակենդանացնել այն՝ մոտեցնելով բնականին: Մինչդեռ բանավոր խոսքն անհրաժեշտ է ճիշտ հնչերանգով և առոգանությամբ արտասանել, որպեսզի իմաստի խեղաթյուրում և թյուրիմացություն չառաջանա:

Առաջադրված են որոշակի պահանջներ աշակերտների ինքնուրույն ընթերցանության կազմակերպման, ղեկավարման և ստուգման ուղղությամբ: Այդ դասընթացը համարվում է մայրենիի դասի կարևոր լրացում, որն ունի որոշակի նպատակներ.

ա. Սովորողների ընթերցողական հետաքրքրությունների ձևավորում և ընթերցասիրության սերմանում,

բ. գեղարվեստական գրքեր ընտրելու, կարդալու և վերլուծելու կարողության զարգացում,

գ. ձեռք բերված գիտելիքների ընդլայնում և խորացում,

դ. ճանաչողական գիտելիքների ձեռքբերում,

ե. կրտսեր դպրոցականի բարոյակամային արժեքների և գրական ճաշակի ձևավորում և այլն:

Մայրենիի դասագործընթացում սահմանափակ են ի ժամաքանակն ու պայմանները, որի հետևանքով միշտ չէ, որ հնարավոր է լինում լիարժեք ուշադրություն տրամադրել

աշակերտների արտահայտիչ խոսքին և ընթերցանությանը, ուստի այն լրացվում է ինքնուրույն ընթերցանության և արտադասարանական աշխատանքների ընթացքում:

Ինքնուրույն ընթերցանության դասն իր կարևոր տեղն ունի ոչ միայն դասարանային, այլև ընդհանուր առմամբ, ողջ ուսումնադաստիարակչական աշխատանքների ընթացքում: Ինչպես մայրենիի, այնպես ինքնուրույն ընթերցանության դասերի գեղարվեստական լավագույն ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ սեր է արթնանում մեր ժողովրդի ու հայրենիքի հանդեպ, նրանք հաղորդակից են դառնում հայոց լեզվի ճոխությանը, գեղեցկությանն ու ճկունությանը: Նա առավել ազատ դասագործընթաց է, որը մեծ հնարավորություն է տալիս ուսուցչին լրացնելու և խորացնելու աշակերտների գիտելիքները, որի արդյունքում երեխաները մղվում են դեպի գիրքն ու ընթերցանությունը, դեպի ինքնուրույն, որոնողական գործունեությունը, փորձում են հաղթահարել կարդալու դժվարությունները:

Ինքնուրույն ընթերցանությունը ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որին ընթացքում ստեղծված ազատ, անկաշկանդ միջավայրում խոսքի յուրացումը սերտորեն կապվում է երեխայի առօրյա գործունեության հետ: Նման միջավայրում: սովորողն առանց սխալվելու վախի արտահայտում է իր մտքերը, կարծիքներն ու հույզերը: Ինքնուրույն ընթերցանության դասերը տարրական դասարաններում նպաստում են սովորողների գործուն բառապաշարի հարստացմանը: Ձևավորվում են շրջապատող աշխարհի բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Լեզուն պահելու համար առաջին հերթին այն պետք է սիրել և ճիշտ գործածել: Ինքնուրույն ընթերցանությունը, ուսուցման կազմակերպման մի տեսակ է, որտեղ պետք է ստեղծել ազատ, անկաշկանդ միջավայր՝ խոսքի յուրացումը սերտորեն կապելով երեխայի առօրյայի և ամենօրյա գործունեության հետ:

Ինքնուրույն ընթերցանության դասերը պետք է վարել այնպես, որ երեխաների համար գեղարվեստական գրականությունը լինի՝

- մատչելի և հետաքրքիր բովանդակությամբ, ոչ ծավալուն, պատմողական, դինամիկ զարգացող սյուժետով,

- բնության, հայրենի երկրի, կենդանիների, ճանապարհորդությունների մասին,
- երեխաների կյանքը արտացոլող, որպեսզի հիշեցնի սեփական անձի հետ կապված իրավիճակներ,
- ժողովրդական բանավոր ստեղծագործության նմուշներ,
- հումորային, զվարճալի պտմություններ:

Գրական ունկնդրումն առաջին դասարանում նպաստում են սովորողների գործուն բառապաշարի հարստացմանը: Ձևավորում է կենդանիների, շրջապատող աշխարհի, բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, կարդացածի վերաբերյալ կարծիք արտահայտելու կարողություն: Նրանք պարզագույն պատկերացում են կազմում շրջակա աշխարհի մասին, ծանոթանում են հասակակիցների կյանքին, նրանց խնդիրներին:

Ինքնուրուն ընթերցանության համար մայրենիի ուսումնական ծրագիրը ներկայացնում է հետևյալ պահանջները.

- Սեր արթնացնել երեխաների մեջ ընթերցանության նկատմամբ:
- Ընթերցել և ուսուցչի հարցերի օգնությամբ վերարտադրել, ներկայացնել հեքիաթներ, պատմվածքներ, բանաստեղծություններ:
- Կարծիքներ և տպավորություններ՝ փոխանակել կարդացած ստեղծագործության վերաբերյալ:
- Հետևել գրական ստեղծագործության դեպքերի զարգացմանը, հերոսների փոխհարբերություններին և դրանք վերարտադրել նույնությամբ կամ և ստեղծագործաբար:
- Պատմել ըստ հիշողության կամ նկարի:
- Նկարել ընթերցած ստեղծագործության թեմայով, աշխատել բնական նյութերով և մեկնաբանել կատարած աշխատանքները:
- Բեմականացնել ստեղծագործություններ և մասնակցել հագուստի դեկորների ընտրությանը:
- Կազմակերպել մանկական նկարների և ստեղծագործական աշխատանքների ցուցահանդեսներ:

- Ստեղծել դասարանական գրադարան:
- Շարադրել մաղթանքներ, նամակներ, խոսքի մեջ օգտագործել բանահյուսական մատչելի ասույթներ:
- Ընթերցել հումորային ստեղծագործություններ, պատմել զվարճալի դեպքեր սեփական կյանքից:
- Ընթերցել տարաբնույթ նյութեր, խմբերում քննարկել, մտաբերել նման օրինակներ:
- Ինքնուրույն ընթերցանությունը կազմակերպվում է յուրաքանչյուր մայրենիի դասերի հետ համատեղ:

Մինչ երեխային ինքնուրույն ընթերցանության համար նոր գիրք առաջարկելը, անհրաժեշտ է նախապատրաստել նրանց նոր գրքի շուրջ աշխատանքի, այսինքն՝ ստեղծել պայմաններ, որոնց ընթացքում կարթնանա ճանաչողական հետաքրքրություն, ինչն էլ կօգնի աշակերտին հաղթահարելու կարդալու տեխնիկայի հետ կապված դժվարությունները: Աշակերտի ինքնուրույն ընթերցանության համար նախատեսված ոչ ծավալուն ստեղծագործությունը պետք է հրապուրի երեխաներին և ընթերցելու ցանկություն առաջացնի:

Անծանոթ գրքի ինքնուրույն ընթերցանությունն առաջին դասարանցու համար այնքան բարդ աշխատանք է, որ առանց ուսուցչի ճիշտ մշակված օգնության, ոչ բոլոր աշակերտներն են ունակ դրանք հաղթահարելու: Պետք է աշխատանքն այնպես կազմակերպել, որ աշակերտները հաճույք ստանան ինքնուրույն կերպով գրքին հաղորդակցվելիս:

Համաշխարհային մանկական գրականությունից անհրաժեշտ է ընտրել այնպիսի նմուշներ, որոնց ընթերցումը խթանում է երեխայի ստեղծագործական միտքը, նպաստում երևակայության զարգացմանը: Այդպիսի գործեր են, օրինակ Ջանի Ռոդարիի <<Շոկոլադե ճանապարհը>>, Վ. Բիրյուկովի <<Քաղաքավարի գորշուկը>>, Դ, Բիսեթի «Մոռացված ծննդյան օրը>>. . .

Յուրաքանչյուր դասի աշակերտները վարժվում են ընտրել և կարդալ մանկական գրքեր: Երեխաներն ինքնուրույն դիտարկում են անծանոթ գիրքը, իսկ այնուհետև որոնում ընթերցում են այդ գրքում զետեղված անհրաժեշտ գեղարվեստական ստեղծագործությունը: Ուսուցիչն ուշադիր հետևում է, թե ինչ դժվարությունների են

հանդիպում երեխաներն աշխատանքի ընթացքում, ինչ սխալներ են թույլ տալիս, ով և ինչու է ժամանակից շուտ դադարեցնում ընթերցանությունը: Աշակերտներ կան , որ պետք է ստանան առավել հեշտ իսկ ուժեղները՝ իրենց ուժերի ներածին չափով բարդ առաջադրանքներ: Առաջին մակարդակի աշակերտը կարող է կարդալ ստեղծագործության մի փոքրիկ մասը: Իսկ նրանք, ովքեր շատ ավելի լավ են ընթերցում, ցանկալի է հանձնարարել լրացուցիչ առաջադրանք, օրինակ՝ մտածել տրված հարցի վերաբերյալ:

Նոր գրքին ծանոթացումը կատարվում է հետևյալ ընթացքով, Երեխաներն ուսումնասիրում են գրքի շապիկը, որոնում և գտնում են վերնագիրը, հեղինակի անուն ազգանունը, թերթում են գիրքը: Աշակերտներից որևէ մեկը բարձրաձայն ընթերցում է գրքի սեղմագիրը: Այնուհետև երեխաներն արտահայտում են իրենց ենթադրությունները՝ գրքի բովանդակության մասին: Ուսուցիչը ցուցում է տալիս, թե այդ գրքից որ ստեղծագործությունն է անհրաժեշտ ընթերցել: Ընթերցելուց հետո անհրաժեշտ է կատարել տարաբնույթ աշխատանքներ՝ տեքստի շուրջ: Կարելի է հանձնարարել տանը նկարել, փնտրել և դասարան բերել նմանատիպ նոր ստեղծագործություններ:

Աշխատելու ընթացքում գրատախտակին գրում ենք մեր նշանաբանը՝ <<Աշխատենք այնպես, որ այս ստեղծագործությունը հարստանա մեր մտքի ու երևակայության պտուղներով>>:

Մեկնաբանվում են ստեղծագործության վերնագիրը, ժանրը, թեման, իսկ գրքի շուրջ ամբողջ աշխատանքն անցկացվում է երեխաների սկզբնական ընկալումից հետո:

Ստորև ներկայացնենք մեկ օրինակ՝

1.Խոսքային վարժությունների նյութն ընտրվում է այնպես, որ հնարավորություն ստեղծի ակտիվացնելու երեխաների կենսափորձը: Ներկայացված պատկերները պետք է փոխկապակցված լինեն տեքստի բովանդակության հետ: Դրանք նախապես գրվում են վահանակների վրա, իսկ մյուս կողմում նկարներն են:

1.Այնուհետև պատասխանները լսելուց հետո՝ հանձնարարվում է բնութագրել կենդանիներին կամ թռչուններին իրենց պատկերացմամբ,

Աղվես-խորամանկ, խարդախ, գող

Շուն-հավատարիմ, բարի, ուժեղ

Աքաղաղ- ազնիվ, միամիտ, լսող

2.Որպես դադար, փորձում ենք ինչ-որ շարժումով կամ ձայնով նմանակել հերոսներին։

3. Այնուհետև բացել Հովհ. Թումանյանի հեքիաթների գիրքը, ծանոթանալ հեղինակի հետ և գուշակել, թե որ հեքիաթն են կարդալու։

ա) Կարդալ վերնագիրը և խորհել, թե ինչի մասին կարող է լինել հեքիաթը;

բ) Ընթերցել հեքիաթից մի հատված;

գ) Ընթերցել ամբողջը և մտածել գրատախտակին գրված հարցի շուրջ;

դ) Կարդալուց հետո բացատրվում են անհասկանալի բառերն ու բառակապակցությունները;

ե) Ունկնդրած հեքիաթը վերարտադրում են՝ օգտվելով բանալի բառերից, որոնք գրվել են գրատախտակին

զ) Կատարում են ստեղծագործական աշխատանք՝ հեքիաթի նկարազարդման, բովանդակության, կերպարների շուրջ։

-Նկարը համեմատել հեքիաթի բովանդակության հետ։

-Հեքիաթի որ դրվագն է ներկայացված նկարում, ընթերցել այդ հատվածը։

-Նկարագրել հերոսներին. Ինչպե՞ս են խոսում, կամ ի՞նչ են խոսում։

Խմբային աշխատանք

1-ին խումբ- մտածել նոր վերնագիր

2-րդ խումբ- փոխակերպել հերոսներին

3-րդ խումբ- մտածել հեքիաթի նոր ավարտ

Դասի ամփոփում

Կիրառել <<**Քառաբաժան**>> մեթոդը

Ինչ տեսա	Ինչ լսեցի
Ինչ զգացի	Ինչ հասկացա

Տնային աշխատանքի հանձնարարում.

Նկարել հեքիաթից իրեն դուր եկած հերոսին։

Այսպիսով, երեխան պետք է հասկանա, որ մայրենի լեզուն սովորում են ոչ միայն և ոչ այնքան դասերը լավ պատասխանելու, այլև կարդացածը և ունկնդրածը լիարժեք վերարտադրելու, մարդկանց հետ զրուցելու, օգտակար խորհուրդ տալու, այսինքն շրջապատի հետ արդյունավետ հաղորդակցվելու համար:

Արտադասարանական պարապունքների անցկացման ձևերից են դաս-ցերեկույթները, գրական-երաժշտական միջոցառումները, արվեստի վարպետների նշանավոր արտիստների ու ասմունքողների ձայնագրությունների ունկնդրումները ՏՀՏ միջոցներով, ինչպես նաև գեղարվեստական ցուցադրությունները և այլն, որոնք երեխաների համար գեղեցիկ խոսքի ու արտահայտիչ ընթերցանության օրինակ կարող են լինել: Դրանք ունեն նաև ուսուցողական ու դաստիարակչական մեծ նշանակություն ուգևորում են սովորողներին և նպաստում արտահայտիչ ընթերցելու կարողության ձևավորմանը: Այդ դասերն առավել հետաքրքրաշարժ և արդյունավետ դարձնելու համար ուսուցիչը կարող է դիմել դերային խաղերին բեմականացնելով որևէ արձակ կամ չափածո ստեղծագործություն: Դերային կերպարանափոխությունը, ներթափանցումը հերոսի կերպարի մեջ աշակերտներից յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում կատարել իր հոգուն հարազատ ստեղծագործական աշխատանք: Նմանատիպ աշխատանքները ոգևորում են երեխաներին, նպաստում նրանց ինքնուրույն ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Այսպիսով ինքնուրույն ընթերցանության դասը պետք է խթանի աշակերտների ինքնուրույն մտավոր գործունեությունը զարգացնի նրանց ստեղծագործական ունակությունները:

Մարդն իր ողջ կյանքի ընթացքում գտնվում է շրջակա միջավայրի հետ մշտական շփման և փոխազդեցությամ մեջ: Միջավայրի անընդհատ փոփոխությամբ պայմանավորված՝ ծագում են նոր խնդիրներ ու պահանջմունքներ: Եվ ստացվում է այնպես, որ մեր կյանքը կարգավորվում է հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքով, որի մեջ ծանրակշիռ դեր ունեն բարոյական արժեքներն ու չափորոշիչները: Նկատենք, որ բարոյական պատկերացումների ձևավորումը տեղի է ունենում դեռևս մանկական տարիքում և զարգացվում դպրոցում՝ ուսումնառության ընթացքում:

Հայտնի է, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխան անվերապահորեն հավատում է այն ամենին, ինչ ասում են մեծերը և ինչը գրված է գրքում: Այն բարոյական պատկերացումները, որոնք նա ստանում է ընտանիքում և դպրոցում, դառնում են բարոյական և համոզմունքներ, որոնք հետագայում ձևավորում են որոշակի վերաբերմունք իր և ուրիշների նկատմամբ:

Այդ խնդրի լուծմանը մեծապես նպաստում է մայրենիի դասն իր կառուցվածքով, որի ընթացքում կարևորվում են նաև դաստիարակչական նպատակները, գեղագիտական ճաշակի, աշխատասիրության, ազնվության, ճշտապահության, բարոյական ու կամային, ազգային ու համամարդկային արժեքների ձևավորում: Այդ աշխատանքը իրականացվում է հիմնականում բուն դասագործընթացում և արտադասարանային ընթերցանության միջոցով: Գրական ստեղծագործություններին ծանոթանալն ու դրանց ընթերցումները ինքնատիպ միջոց են երեխայի զգացմունքների դաստիարակման համար Գեղարվեստական ստեղծագործություններում արտացոլվում է կյանքն իր ամբողջ հարստությամբ և բազմազանությամբ: Դրանք այն մեծ խթանն են, որոնց օգնությամբ երեխան ճանաչում է աշխարհը, նա ձեռք է բերում մարդկայնության, հուզելու ունակություն, ուրիշներին ապրումակցելու, նրանց ուրախությամբ ուրախանալու կարողություններ: Բացահայտելով աշխարհը՝ գրողը օգնում է ընթերցողին տեսնել գեղեցիկը կամ մերժելին, վեհը և ազնիվը: Ունենալով զգացմունքային ներգործություն և խորապես հուզելով՝ այն ընթերցողին պարգևում է գեղագիտական բավականություն, նպաստում շրջակա իրականության ընկալմանը և վերաիմաստավորմանը, ձևավորում նրանց աշխարհընկալումը:

Գրական երկերի ընթերցման միջոցով կրտսեր դպրոցական, փորձում է երևակայությամբ ներթափանցել նկարագրված դեպքերի ու իրադաձությունների մեջ, ապրումակցել հերոսներին, և դրանց ազդեցությամբ աստիճանաբար սկսում է յուրացնել տարաբնույթ բարոյական հասկացություններ ու արժեքներ: Ըստ այդմ էլ՝ գրական երկերի գեղագիտական և բարոյական արժեքներն գնահատելու համար կարևորվում են հետևյալ դրույթները՝

ա. մտորել կարդացածի շուրջ,

բ. գնահատել նրանց արարքները,

գ. համեմատել իրենց կյանքը հերոսների կյանքի հետ,

դ. կատարել բարոյական չափանիշներին համապատասխան արարքներ։

Այս գործընթացում կարևոր է ուսուցչի աշխատանքը, մեթոդների ընտրությունը, որոնք դաստիարակչական և ուսուցողական մեծ արժեք ունեն: Գեղարվեստական գործերը միայն օգնում ու կողմնորոշում են ուսուցչին, թե ինչպես նպատակաուղղել աշխատանքը, որպեսզի երեխաների մեջ զգացմունքներ առաջանան, և ինչպես հղկեն դրանք: Իսկ, թե ինչպես հուզել աշակերտներին ստեղծագործությունների ընթերցման ժամանակ, պայմանավորված է ոչ միայն ուսուցչի հմտությամբ և գեղարվեստական ընթերցանությանը տիրապետելու կարողությամբ, այլև այն մեթոդներով ու սկզբունքներով, որոնցով առաջնորդվում է նա: Ուսուցիչը պետք է այնպես կարդա, որ երեխայի աչքերը փայլեն, հուզմունքից շունչը պահի... Միայն այս ճանապարհով երեխան կկարողանա գնահատել ու վերլուծել բարոյական արժեքները՝ բարությունը, ազնվությունը, մեծահոգությունը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, հանդուրժողականությունը և այլն: Շահեկան է, որ աշակերտն ինքը կարողանա վերլուծել ընթերցած ստեղծագործությունը և սեփական եզրահանգումներ անել բարու և չարի, լավի ու վատի, ճշմարիտի ու սխալի մասին:

Այսպիսով՝ **գրականությունն ու գրական ընթերցանությունը** այն ակունքն են, որոնց միջոցով **ձևավորվում են կրտսեր դպրոցականների հետաքրքրությունն** ու սերը ընթերցանության նկատմամբ, հզորանում է բարոյական արժեքների ներգործության ուժը, ինչպես նաև գրական խոսքը խորությամբ հասկանալու կարողությունը: Արտահայտիչ ընթերցանությունը սովորեցնում է տեսնել ու զգալ գեղեցիկը, բարին, վեհը, վսեմն ու ազնիվը:

Խոսքային գործունեությունը ներքին և արտաքին գործողությունների հետևանք է: Խոսքով մենք ներկայացնում ենք մեզ շրջապատող իրերն ու երևույթները: Մեր խոսքի բովանդակությունն են կազմում մեզ հետաքրքող իրողությունները, թե դրանք ինչու և ինչպես են կատարվում և այլն:

Այլ է **գեղարվեստական խոսքը**: Գրողն իր ստեղծագործության մեջ գեղարվեստորեն ներկայացնում է իրականությունը, գեղագիտորեն վերարտադրում բնապատկերները, նկարագրող երևույթների պատկերավորությունը: Եվ եթե գրողի ստեղծագործության

նյութը բառն է, ապա ասմունքողինը՝ խոսքն է: Գրողի բառերի ողջ ուժը, հմայքը հասկանալու և համապատասխան հոգեվիճակը փոխանցելու համար անհրաժեշտ է տիրապետել հստակ և համակարգված որոշակի գիտելիքների:

Եվ այսպես՝ ունկնդրին հուզելու, խոսքով ներգործելու կարողությունների ու 7 հմտությունների զարգացումն անհրաժեշտ է սկսել գիտական ստեղծագործության վրա տարվող համակարգված աշխատանքով: Այն պետք է ընդգրկի ուղղախոսական հնչարտաբերական, առոգանական վարժությունները, որոնց միջոցով աստիճանաբար կհղկվի ու կմաքրվի սովորողների խոսքը:

Կարդալ՝ նշանակում է **հասկանալ** և **ըմբռնել** ստեղծագործության **իմաստը**: **Հասկանալով կարդալը** կրտսեր դպրոցի մայրենիի ուսուցման հիմնական նպատակներից է:

Գեղարվեստորեն ընթերցված նյութն առավել դյուրին է յուրացվում, և ըմբռնվում, երկար ժամանակ մնում է սովորողի հիշողության մեջ, քանի որ այդ դեպքում պարզորոշ շեշտված և ընդգծված են ստեղծագործության գլխավոր և երկրորդական մտքերը, ենթատեքստը, հերոսների հոգեվիճակը, բնության երևույթների հերթագայությունը և այլն: Եվ այդ ամենը պայմանավորված է կարդալու արագությամբ և դանդաղությամբ, ձայնի բարձրությամբ և ցածրությամբ, տեմպի և հնչերանգի փոփոխությամբ:

Խոսքի հուզականությունը և զգացմունքայնությունը ևս շատ կարևոր հանգամանք է գեղարվեստական ընթերցանության ժամանակ: Հուզականությունը հոգեբանորեն՝ բարդ երևույթ է, որ անկառավարելի է, <<Զգացմունքներին չի կարելի հրամայել, նրան պետք է հասնել այլ ճանապարհով>>:

Ընթերցանության գործընթացը սովորողների հուզականության բարձրացմանը, ստեղծագործության մեջ արտահայտված զգացմունքների ըմբռնմանը, մեծապես նպաստում է մինչև նյութի ընթերցումը կազմակերպված նախապատրաստական զրույցը:

Խոսքի արտահայտչականության և գեղարվեստականության հիմքն է նաև արտասանական երանգավորումը կամ հնչերանգը: Պետք է նկատի ունենալ, որ մեր զգացմունքայնությունը, հուզմունքը, սերը և մյուս բոլոր կամային ու տրամաբանական

տարրերը մենք արտահայտում ենք նաև մեր ձայնի երանգավորման կամ հնչերանգի միջոցով:

Այսպիսով՝ արտահայտիչ ընթերցանության մեթոդիկան իր գիտական հիմքերով և նպատակներով կազմում է հայոց լեզվի և գրականության դասավանդման մի մասը, որի հիմքը բառի հնչեղ բարձրաձայն արտասանությունն է:

Ուրեմն՝ արտահայտիչ, գեղարվեստորեն ընթերցանությունը ու խոսքը ոչ միայն հարստացնում են սովորողների խոսքային կարողությունները, սովորեցնում են հասկանալ և արժևորել հնչվող բառի իմաստը, դաստիարակում են ճաշակ գնահատելու հղկված, մշակված խումբը, այլև զարգացնում են նրանց մտածողությունը, բազմաշերտ դարձնում սովորողների զգացմունքներն ու ողջ արժեհամակարգը:

Ինքնուրույն ընթերցանության մեթոդի հիմնական բաղադրամասերն են՝ **զրույցը**, **բնագրի ընթերցումը**, **բառային աշխատանքը**, նյութի մշակումը, բովանդակության **վերարտադրումը և ամփոփումը** կամ տրամաբանական եզրակացությունը: Ընթերցանության դասերին անցկացվող զրույցներն ըստ իրենց բնույթի ու անցկացման ժամանակի լինում են երեք տեսակ

ա. նախապատրաստական, այսինքն՝ բնագրի ընթերցմանը նախորդող կամ ընթերցումը նախապատրաստող,

բ. ուղեկցող, այսինքն՝ կարդալուն ուղեկցող կամ բնագրի վերլուծման հետ կապակցված և

գ. ամփոփիչ կամ թեմայի ամփոփման հետ կապված

Եզրակացություն

Այս հետազոտության միջոցով փորձեցինք ներկայացնել ինքնուրույն ընթերցանության ժամերի կազմակերպան մեթոդները:

Ընթերցանությունը տարրական դասարաններում մայրենի լեզվի ուսուցման ու աշխարհաճանաչողական տարրական տեղեկությունների հաղորդման, երեխաների մտավոր զարգացման ու բարոյական դաստիարակության ամենակարևոր միջոցներից մեկն է: Այն մեր դպրոցներում այժմ տարվում է բացատրական ընթերցանության մեթոդով, որը ուսուցման ձևերի ու եղանակների մի ամբողջ համակարգ է կազմում:

Ընթերցանությունը ոչ միայն գործնական ճանապարհով երեխաների մեջ լեզվական պաշարի՝ բառերի, դարձվածքների, լեզվական ու արտահայտչական ձևերի ու բնորոշ համեմատությունների կուտակման միջոց է, այլև լեզվական կարողությունների խոսքի կառուցման, բառերի ու դարձվածքների՝ տեղին ու ճիշտ օգտագործման համաձայնության կապակցության և համանման այլ կարողությունների ու հմտությունների մշակման ու զարգացման միջոց: Լեզուն, ինչպես գիտենք, որ միայն լեզվական քերականական օրենքների ու օրինաչափությունների գումարը չէ, այլև բառերի այն պաշարը, որը շինանյութ է ծառայում մտքերը <<լեզվական թաղանթով>> պատելու համար: Հենց այդ նկատառումով էլ ընթերցանության խնդիրներից մեկն էլ բառերի՝ մայրենի լեզվի բառային հիմնական ֆոնդի, իսկ մասամբ էլ՝ նրա բառագանձի ուսուցումն է:

Ընթերցանությունը նպաստում է մայրենի լեզվի ուսուցմանը նաև նրանով, որ ապահովում է կենդանի, գեղեցիկ ու ճիշտ կառուցված խոսքի ընդօրինակումը:

Այսպիսով, ղեկավարվելով մայրենի լեզվի ծրագրով և օգտագործելով ընթերցարանների գործնական նյութերը ուսուցիչը բացատրական ընթերցանության միջոցով աշակերտներին զինում է շրջապատի բնական ու հասարակական երևույթների ճիշտ ճանաչողությամբ, ռեալ ու բազմակողմանի տեղեկություններ է տալիս կյանքի մասին: Իսկ գեղարվեստական ստեղծագործությունների միջոցով աշակերտների մեջ՝ մշակում է գեղարվեստական ճաշակ, սեր դեպի գեղեցիկն ու լավը, մշակում է ազնիվ ու բարի հակումներ, վեհ ու խորապես մարդկային զգացմունքներ: Թե՛ մեկ և թե՛ մյուս

տիպի նյութերի միջոցով երեխաների մեջ մշակում է լեզվական բարձր մշակույթ, որպեսզի նրանք կարողանան իրենց տեսածն ու լսածը, իրենց խոհերն ու ապրումները պարզ, անպաճույճ, հստակ, մաքուր ու գեղեցիկ հայերենով և տրամաբանված ձևով արտահայտել: Համառոտակի սրանք են այն նպատակներն ու խնդիրները, որ ունի դասարանական ընթերցանությունը դպրոցում: Կարդալու հմտություններին տիրապետող աշակերտները ունեն ավելի մեծ բառապաշար, ավելի շատ գիտելիքներ շրջապատի և աշխարհի մասին: Նրանք ավելի լավ են գրում, թույլ են տալիս քիչ տառասխալներ, ունակ են ըմբռնելու նոր իրավիճակներն ու գաղափարները, խելամիտ դատողություններ են անում և ավելի այլ են ճանաչում իրենք իրենց: Ինքնուրույն ընթերցանության խնդիրներն ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ դրանք ազդում են մյուս առարկաներից աշակերտի առաջադիմության վրա: Այս պարագայում, երբ լավ կարդա սովորելու անհաջող ջանքերն առաջ են բերում հուսախաբություն և դրդապատճառների բացակայություն, տուժում է երեխայի ինքնագնահատականը: Իսկ այն **երեխաները**, որոնք **արձանագրում** են **ընթերցանական բնականոն առջընթաց** աստիճանաբար **դրսևորում** են այլ **ունակություններ**: Նրանք գիտեն, թե ինչպես է պետք է կարդալ տեղեկություն քաղելու համր, տիրապետում են նախնական ընթերցանության, հարցադրումներ, գրառումներ, նշումներ կատարելու, յուրացրածն ամփոփելու և տեղեկությունների համար ընթերցվելիք գրքերն ուսումնասիրելու ռազմավարություններին: Կարդալու դժվարություն ունեցող աշակերտներին անհրաժեշտ է օգնել՝ հաղթահարելու այդ դժվարությունները: Դա անելու համար նախ պետք է բացահայտել երեխայի ընթերցանության ուժեղ և թույլ կողմերը: Այսինքն՝ հարկավոր է նախ պարզել ընթերցանական ունկության այն ոլորտները, որոնք ամրակայման կարիք ունեն: Երբ երեխան դժվարություններ է գրանցում սահուն կարդալու հարցում, ուրեմն անհրաժեշտ է սովորեցնել նրան տեքստ ընթերցել ամբողջական բառերով, խոսելու տեմպին համահունչ: Հարկավոր է վարժեցնել, որ երեխան հայացքի մեկ ընդգրկումով կարողանա ընթերցել և ընկալել բառակապակցություններն ու նաախադասությունները: **Ընթերցման սահունություն** նշանակում է հարթ, անջանք թվացող ընթերցում, որը ներառում է արտահայտչականություն և իմաստալից ելևէջներ:

Այս պահանջը կարևոր է, քանզի ուղեղը յուրաքանչյուր պահի կարող է տրամադրել ուշադրության որոշակի քանակ, և այն ջանքը, որ կարդացողը գործադրում է բառերն արտաբերելու կամ ճանաչելու համար, զրկում է նրան իր կարդացածը հասկանալու և դրա մասին խորհելու հնարավորությունից: Եթե երեխան դժվարություններ է գրանցում հասկանալով կարդալու հարցում, ուրեմն նրա հետ հաճախ պետք է աշխատանք տանել, որպեսզի հասկանա ընթերցվող նյութի գլխավոր միտքը, հստակ արտահայտվի այդ մասին և անի դատողություններ:

Առաջարկություն

Դպրոցի գրադարանն ապահովվել համապատասխան գրականությամբ, որպեսզի երեխաները կարողանան օգտվել այդ գրականությունից: **Գրականությունն** հագեցած լինի **արդիական** թեմաներով, ժամանակին համահունչ:

Միաժամանակ հարստացնել համայնքի, գյուղի գրադարանները ժամանակակից գրականությամբ: Ազատ, տոն օրերին երեխաները կարողանան օգտվել գրականությունից:

Կիրառել համագործակցային մեթոդներ այլ դպրոցների տարրական դասարանների աշակերտների հետ՝

- Բանավեճի տեսքով
- Խաղերի և բեմականացման տեսքով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գյուլամիրյան Ջ. «Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործական-հետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկա»: «Նախաշավիղ», 2001 թիվ 3

2. Գյուլամիրյան Ջ.Հ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, - Եր.: «Զանգակ-97», 2009

3. Գյուլամիրյան Ջ.Հ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, -Եր.:«Լույս», 1998

4. Խարազյան Ռ. Փ., Աշակերտների բառապաշարի հարստացումը տարրական դասարաններում, -Եր.: «Ասողիկ», 2003

5. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Հ. Խաչատրյան, 50 հարց ու պատասխան դասվարին